

ՀՀ գլխավոր դատախազ՝  
պարոն Արթուր Դավթյանին

Ներքոստորագրյալ փաստաբաններից

22.12.2020թ.

## ՀԱՂՈՐԴՈՒՄ

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի կատարման փաստի կապակցությամբ)

#### I. Հանցագործության մասին հաղորդման փաստական հանգամանքները

1.1 **2019թ. օգոստոսի 5-ին** Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կազմակերպված հանրահավաքին և հանդես եկել ծրագրային ելույթով<sup>1</sup>: Այդ ելույթում անդրադառնալով կառավարության ծրագրի մեջ Արցախի բացակայության հանգամանքին Նիկոլ Փաշինյանը նշել է՝

*«Համոզված եմ՝ հիմա ձեզնից շատերը հարցնում են՝ իսկ ինչո՞ւ Արցախի մասին ոչինչ ասված չէ: Պատասխանը շատ պարզ է, որովհետև Արցախը Հայաստան է և վերջ:»:*

**2020թ. ապրիլի 9-ին** ԱԺ-ում արված Փաշինյանն հետևյալ հայտարարություններն է կատարել, որը ես բանակցային ընթացքը փոխելու և այնուհետև տապալելու մասին է վկայում՝

*«Կրկին մեկնաբանելով պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի՝ «նոր պատերազմ՝ նոր տարածքների դիմաց» հայտարարությունը՝ վարչապետը նշեց, որ հարցին արդեն բազմիցս անդրադարձել են:*

*«Մենք ասում ենք՝ մեզ մի վախեցրեք պատերազմով, որովհետև մենք պատերազմից վախեցողը չենք: Պաշտպանության նախարարի ասածի մեջ որևէ ապակառուցողական բան չկա: Մենք ամեն բան անելու ենք, որ խաղաղության օրակարգն առաջ քաշենք: Բայց այս ամենն ասելով՝ թող ոչ ոք չկարծի, որ մենք վախենում ենք պատերազմից: Եթե մեկը մտածում է, որ Հայաստանի դեմ պատերազմ սկսի, Հայաստանը հանձնվելու է, ուրեմն միամիտ է: (...):»:*

Լրագրողներից մեկի դիտարկմանը, թե նա դարաբաղյան հարցի բանակցությունները վերսկսում է այն կետից, որտեղ կանգ էր առել Սերժ Սարգսյանը, Նիկոլ Փաշինյանը հակադարձեց. *«Ոչ, ես այդ կետից չեմ սկսել: Ես*

<sup>1</sup> <https://www.civilnet.am/news/2019/08/06/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%A8-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%A7-%D6%87-%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB/365258>

*բանակցությունները սկսել են ոչ թե Սերժ Սարգսյանի կետից, այլ իմ սեփական կետից: Սա շատ կարևոր է»<sup>2</sup>:*

**1.2 2020 թվականի հուլիսի 9-ին** ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդին՝ Աշոտ Փաշինյանն ավարտել է Արցախի Պաշտպանության բանակում իր ծառայությունը և վերադարձել է տուն<sup>3</sup>:

**1.3 2020 թվականի հուլիսի 12-ին** Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ադրբեջանի Հանրապետության սահմանապահ զինված ուժերի միջև հայ-ադրբեջանական շփման գծի Տավուշ-Թովուզ հատվածում տեղի է ունեցել ռազմական բախում<sup>4</sup>:

**1.4 2020թ. օգոստոսի 28-ին** վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ Սարդարապատի հուշահամալիրում հանդիսավոր պայմաններում տեղի է ունեցել Տավուշյան հաղթական մարտերի հերոսների պարգևատրման արարողությունը<sup>5</sup>:

ՀՀ վարչապետի միջնորդությամբ և Հանրապետության նախագահի հրամանագրերով Տավուշյան հաղթական մարտերի ակտիվ դերակատարներից 16 զինծառայողներ պարգևատրվել են «Մարտական խաչ» առաջին աստիճանի, 55 զինծառայողներ՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով:

**1.5 2020թ. սեպտեմբերի 24-ին** մամուլում հրապարակվել է «Գաղտնի բանակցություններ՝ Նիկոլ Փաշինյանի և Իլհամ Ալիևի էմիսարների միջև. գաղտնագրվածում է Բաքուն՝ տալով անուններ» հոդվածը, որը հղում կատարելով ադրբեջանական haqqin.az-ի լրատվական կայքին Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև տեղի ունեցած գաղտնի բանակցությունների վերաբերյալ նշել է՝

*«Արսեն Խառատյանի խոսքերի համաձայն, Փաշինյանն ապագայի համար երաշխավորում էր Լեռնային Ղարաբաղին ժամանակավոր կարգավիճակի տրամադրման դիմաց եւս երկու շրջանի «դեռոկուպացիա»։ Խոսքը մասնավորապես՝ Լաչինի եւ Քարվաճառի մասին է եղել: Խառատյանն առաջարկել է Հայաստանի եւ Ադրբեջանի կառավարությունների էմիսարների միջև գաղտնի առաջին հանդիպումն անցկացնել Թբիլիսիում: Մակայն հաշվի առնելով, որ ռուսական հատուկ ծառայությունները չափազանց ակտիվ են Թբիլիսիում, քննարկումների արդյունքում պայմանավորվել են հանդիպումը անցկացնել չեզոք տարածքում՝ որեւէ եվրոպական երկրում: Ամփոփելով, առաջին խորհրդակցությունները, Արսեն Խառատյանը ասել է, որ ստիպված է ապագա քայլերը համաձայնեցնել հենց Փաշինյանի հետ: Անձամբ զեկուցելով Փաշինյանին ադրբեջանական կողմի ներկայացուցիչների հետ առաջին խորհրդակցությունների մասին, նա ստացել է մանդատ՝ գաղտնի բանակցություններ վարել անձամբ Նիկոլ Փաշինյանի անունից:*

<sup>2</sup> <https://www.youtube.com/watch?v=pj1ro9hGIBo>

<sup>3</sup> <https://armenpress.am/arm/news/1021145.html>

<sup>4</sup> <https://mil.am/hy/news/8066>

<sup>5</sup> <https://mil.am/hy/news/8303>

*Եվրոպական պետություններից մեկում Արսեն Խառատյանը ադրբեջանական կողմի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտնում է, որ Նիկոլ Փաշինյանն ունի մտադրություն քրեական գործ հարուցել ՀԱՊԿ այն ժամանակվա գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի հանդեպ:»<sup>6</sup>*

**1.6 2020 թվականի սեպտեմբերի 27-ին** Ադրբեջանի կողմից Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավվմամբ Արցախի Հանրապետության նկատմամբ ձեռնարկվել է ռազմական հարձակում, որի շրջանակներում թիրախավորվել են Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, մշակութային կենտրոնը՝ Շուշին:

**1.7 2020 թվականի սեպտեմբերի 27-ին** ՀՀ կառավարությունը հայտարարել է ռազմական դրություն<sup>7</sup>:

**1.8** Ռազմական գործողությունների ողջ ընթացքում ՀՀ կառավարության պաշտոնական աղբյուրները հասարակությանն ապատեղեկատվություն են տրամադրել ռազմական գործողությունների իրական հանգամանքների վերաբերյալ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակային աղբյուրներով երբեմն տեղեկատվություն էր տրամադրում Հայաստանի Հանրապետության պաշարների և պահուստների, պահեստագործում գտնվող որոշակի խմբի անձանց քանակի, ինչպես նաև ծրագրավորվող ռազմական գործողությունների մասին:

Վարչապետը տեղեկացված է եղել ՀՀ զինված ուժերի իրական հնարավորությունների մասին, սակայն օր առաջ չի դադարեցրել ռազմական գործողությունները:

Մասնավորապես՝

**2020թ. մարտի 19-ին** ՀՀ կառավարության նիստում Նիկոլ Փաշինյանը հայտնել է Հայաստանի պարենային պաշարների մասին տվյալներ: Նրա խոսքով, օրինակ 2 օր առաջվա դրությամբ շաքարավազի 201 օրվա պաշար ունի Հայաստանը. «*Հավի մսի 64 օրվա պաշար ունենք, ձեթի 38 օրվա պաշար ունենք: Միաժամանակ միայն ամսի 18-ին 38 բեռնատար սննդամթերք է մուտք գործել Հայաստան, այդ թվում 18 տոննա ձեթ, 220 տոննա շաքար, 145 տոննա ցորեն, 15 տոննա հրուշակեղեն, 20 տոննա սիսեռ, նաև արեւածաղկի սերմ, դդմի սերմ, սառեցված միս, կարտոֆիլ և այլն.*»<sup>8</sup>:

**2020թ. հոկտեմբերի 5-ին** Ֆեյսբուքյան «Մարտակոչ վերջին մեկ տարում գորացրված մեր զինվորներին» ելույթում<sup>9</sup> Նիկոլ Փաշինյանը զինվորների քանակ է հրապարակել, ինչպես նաև զինվորական հատուկ հանդերձանքի բացակայության մասին տվյալներ է հաղորդում:

**2020թ. նոյեմբերի 11-ին** ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Օ. Գասպարյանը հետևյալ հայտարարությունն է ներկայացրել՝

<sup>6</sup> <https://hraparak.am/post/d8559216997b031105e4e55ca3b2c271>

<sup>7</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=146652>

<sup>8</sup> <https://news.am/arm/news/566981.html>

<sup>9</sup> <https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/660183714892231/>

«Պատերազմի չորրորդ օրը՝ անվտանգության խորհրդի նիստի ժամանակ ես ներկայացրեցի մեր կորուստները և ստեղծված իրադրության վերաբերյալ զինված ուժերի գնահատականը՝ նշելով, որ երկու-երեք օրվա ընթացքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պատերազմը կանգնեցնելու համար, հակառակ դեպքում այս ինտենսիվությամբ վարվող մարտական գործողությունների պարագայում մեր ռեսուրսները սեղմ ժամկետում կսպառվեն և յուրաքանչյուր հաջորդ օրերի ընթացքում ունենալու ենք բանակցային գործընթացի համար ավելի ոչ բարենպաստ պայմաններ»<sup>10</sup>:

**1.9. 2020 թվականի նոյեմբերի 9-ին** ՀՀ վարչապետը, ՌԴ և Ադրբեջանի Հանրապետության նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ (**այսուհետ՝ Հայտարարություն**)՝ ամբողջական հրադադարի և բոլոր ռազմական գործողությունները դադարեցնելու մասին, որի 1-ին կետում մասնավորապես նշվել է. «Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:»:

*Թեև հայտարարությունը նախատեսում է, որ կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում (բացառությամբ այն շրջանների, որոնք անցնում են Ադրբեջանի վերահսկողության ներքո), այնուամենայնիվ սահմանազման և սահմանազատման գործընթացի արդյունքում թշնամուն են անցնում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում տեղակայված տարածքներ ևս<sup>11</sup>:*

**1.10** Ինչպես պարզվել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հարցազրույցներից մեկով, ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը ընտրել է հնարավոր տարբերակներից վատթարագույնը՝ կործանարար հարվածի տակ դնելով Հայաստանի և Արցախի հանրապետությունների ինքնիշխանությունը: Նախկինում ներկայացված և ավելի բարենպաստ տարբերակների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինը 2020թ. նոյեմբերի 17-ին նշել է.

*«Բսկապես, հոկտեմբերի 19-20-ին եղավ հեռախոսազրույցների շարք նախագահ Ալիևի և վարչապետ Փաշինյանի հետ: Այն ժամանակ Ադրբեջանի զինված ուժերը իրենց վերահսկողության տակ էին վերցրել Ղարաբաղի հարավային հատվածից աննշան հատված: Ընդհանուր առմամբ ինձ հաջողվեց համոզել Ալիևին դադարեցնել ռազմական գործողությունները, պարտադիր պայման էր նրա կողմից փախստականների վերադարձը Շուշի: Բայց անսպասելիորեն ինձ համար հայաստանյան գործընկերների դիրքորոշումը ձևակերպվեց այնպես, որ դա իրենց համար անընդունելի է: Փաշինյանն ուղիղ ասաց, որ դրանում Հայաստանի ու Ղարաբաղի շահերի համար սպառնալիք է տեսնում»<sup>12</sup>:*

**1.11 2020թ. նոյեմբերի 29-ին** Ֆեյսբուք սոցիալական կայքում կատարված գրառմամբ Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, ընդունել է ինչպես այն, որ Վլադիմիր

<sup>10</sup> [https://news.am/arm/news/613902.html?fbclid=IwAR2cVnG6YHIU3ds2xkLT\\_0QS6WjAdHACohPHgJVF-iFqRmtzhFknnZkNiAk](https://news.am/arm/news/613902.html?fbclid=IwAR2cVnG6YHIU3ds2xkLT_0QS6WjAdHACohPHgJVF-iFqRmtzhFknnZkNiAk)

<sup>11</sup> Հղումները՝ <https://armeniasputnik.am/society/20201218/25806867/adrbejanakan-zinujn-yndhup-motecee-syuniqi-marzi-shurnux-gyuxin.html>, <https://armeniasputnik.am/society/20201218/25798829/korcnum-enq-syuniqi-karecvoraguyin-sahmanneri-surik-xachatryan.html>

<sup>12</sup> Հղումը՝ <https://www.yerkir.am/news/view/220527.html>

Պուտինի կողմից հնչեցվել են առավել բարենպաստ պայմաններ խնդրի լուծման, այնպես էլ այն, որ Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցնող անձը՝ Արայիկ Հարությունյանը ևս տեղեկացրել է պատերազմի դադարեցման անհրաժեշտության մասին.

*«Հոկտեմբերի 19-ին ինձ զանգահարեց Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը եւ ասաց, որ պետք է կանգնեցնել պատերազմը: Ասաց նաեւ, որ այս տեսակետը փոխանցում է ոչ միայն իր, այլեւ ԼՂՀ պաշտոնաթող նախագահներ Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի, նաեւ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Լեւոն Տեր-Պետրոսյանի անունից:*

*Ես զանգահարեցի ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին եւ նա ասաց, որ կարծում է դա պետք է փորձել անել ռուսական առաջարկների տրամաբանությամբ:*

*(...)*

*Նաեւ՝ պետք է հայկական կողմը պարտավորություն վերցնի, որ ադրբեջանցիները պետք է վերադառնան Շուշի: Այսպես՝ հրադադարը դարձավ անհնարին, որովհետեւ ասացի, որ եթե անգամ Հադրութի հարցով համաձայնեմ, չեմ պատկերացնում Շուշին Ադրբեջանին հանձնելու հնարավորությունը: ՌԴ նախագահը զարմացավ, թե ինչու եմ դեմ ադրբեջանցիների՝ Շուշի վերադառնալու տարբերակին: Երբ ներկայացրի փաստարկներս՝ ասաց, որ տրամաբանական է եւ ինքը լավ տեղեկացված չէր որոշ նրբությունների: Խնդիրն այն էր, որ այդ պարագայում Շուշին 90 եւ ավելի տոկոս ադրբեջանական բնակչություն պետք է ունենար, ովքեր պիտի վերահսկեին դեպի Ստեփանակերտ ճանապարհը:»<sup>13</sup>*

**1.12** Հնարավոր տարբերակներից վատագույնն ընտրելը, որը բացի տարածքային կորուստներից և Հայտարարությամբ չնախատեսված գործողությունների կատարումից պատճառ է հանդիսացել հազարավոր անձանց մահվան, վիրավորման, հաշմանդամության ձեռքբերման, Նիկոլ Փաշինյանը **2020թ. նոյեմբերի 29-ին** փորձ է կատարել արդարացնել նրանով, որ հակառակ դեպքում նրան կմեղադրեին դավաճանության մեջ.

*«Այլընտրանքը այն էր, որ դիմեի ժողովրդին, ասեի՝ ժողովուրդ ջան, իրավիճակը էսպիսին է, կամ պիտի հանձնենք 7 շրջանները, առանց Ղարաբաղի կարգավիճակի, կամ պատերազմ է: Մարդիկ ինչ պետք է ասեին. պիտի ասեին՝ ոչ, մենք կկանգնենք եւ կկռվենք հանուն մեր հայրենիքի: Ու պատերազմը կսկսվեր ու կստացվեր, որ Հայաստանը պատերազմ սկսեց:*

*Եթե ասեի՝ չէ որ չէ, պետք է հանձնենք, մարդիկ պիտի ասեին՝ «Նիկոլ-դավաճան» ու էլի պատերազմ պիտի սկսվեր:»<sup>14</sup>*

**1.13** Վերը նկարագրված իրադարձությունների առնչությամբ **2020թ. նոյեմբերի 19-ի** մամլո ասուլիսի ժամանակ պարզաբանումներ է ներկայացրել նաև գեներալ գնդապետ Մովսես Հակոբյանը՝ հիմնականում անդրադառնալով զինված ուժերի վիճակին, պատրաստվածությանը՝ նշելով.

*«Մեր սուտը գերազանցել է 100%-ը: 100 % սուտը, որը որևէ մեկի մոտ ընկալելի չի: (...) Մենք իրականացրել ենք 100%-անոց սուտ: (...) Առաջինը, երբ որ ես ազատվել եմ Գլխավոր շտաբի պետի պաշտոնից, իսկ ես հեշտությամբ չեմ ազատվել այդ պաշտոնից, որովհետև Վարչապետը իրավասու չի ինձ ազատելու այդ պաշտոնից, և այդպիսի որոշում*

<sup>13</sup> Գրառման հղումը՝ <https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2826795960974114>

<sup>14</sup> Գրառման հղումը՝ <https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2826479421005768>

կայացնելը ես ասել եմ, եթե հրամանը գրեք, ես բողոքարկելու եմ, պիտի հիմնավորեք՝ ինչու էք ինձ հանել: Որովհետև Գլխավոր շտաբի պետին հանելու պաշտոնից հիմքերը պիտի լինի (...) Հիմնավորում եմ պահանջել Վարչապետից ինձ պաշտոնից ազատելու համար: Այդ հիմնավորումը տևել է հինգ օր, հինգ օր անընդհատ ես մտել եմ Վարչապետի մոտ պահանջել եմ հիմնավորում, թե չէ, ապա ես ազատման դիմում չեմ գրելու (...) և եթե գիտեք, ես դիմում չեմ գրել ազատման:

[Աննա Հակոբյանի առնչությամբ]<sup>15</sup> Ինչ է եղել տիկին Աննայի հետ: Քանի որ արգելված է եղել կողմնակի մարդկանց մուտքը հրամանատարական կետ, ես բարձրացել եմ վերև ճաշելու հրամանատարական կետից, իջել եմ, տեսել եմ՝ նստած ա տիկին Աննան էկրանի առաջ, որտեղ երևում են մարտական գործողությունները և կողքը կանգնած ա Բաբայան Սամոն: Բարևել եմ, նստել սեղանի շուրջ, որտեղ այնտեղ ընթանում էր մեկ դիտարժան մարտ, բոլորը շատ երկար ժամանակ լուսաբանում էին, դա հակառակորդի մուտքն էր դեպի Մատաղիս, երբ որ մեր զորքերը ջախջախում էին և բավականին էֆեկտիվ են ջախջախել: Տիկին Աննան նստած դիտարկում էր, որևէ գործի չէր խառնվում, որևէ հարցի չէր միջամտում, ցուցումներ չէր տալիս, դիտարկում էր ընդամենը ինչ է կատարվում մարտի դաշտում: Երբ որ դա ավարտվեց, ես մոտիկացա, խնդրեցի տիկին Աննային, ասեցի՝ տիկին Աննա, այսպիսի տեսարժան բաներ չի լինելու. մնացած ուղղություններում ընթանում են մարտեր: Նպատակահարմար է, որ Դուք գնաք, որովհետև տղաները խոսում են, գոռում են, կարող ա նաև հայիոյեն, կաշկանդվում են Ձեզնից: Ասեց՝ լավ: Մի քսան րոպե նստեց, գնաց: Չորս ժամից հետո ինձ կանչեցին Երևան (...) [Մեջբերում է Պաշտպանության նախարարի խոսքը]<sup>16</sup> Ինձ հրամայել են, որպեսզի Դուք այլևս չգնաք այնտեղ: Դուք այլևս չպիտի գնաք այնտեղ: (...) Պատճառն ինչն ա: Չգիտեմ: Ո՞վ ա ասել: Վարչապետը: (...) Արգելել ա Ձեզ ընդեղ գնալ: (...)<sup>17</sup>

Մովսես Հակոբյանի ասուլիսից պարզ է դառնում, որ զինված ուժերը դիտավորությամբ բերվել են ռազմական ընդհարմանը պատրաստ չլինելու վիճակին: Այդ գործողությունները, որոնք պետք է ուղղված լինեին զինուժի համալրմանը, Նիկոլ Փաշինյանի հրահանգով դադարեցվել են, այն անձինք, ում ներկայությունը ռազմաճակատում ուներ հսկայական նշանակություն, հեռացվել են Արցախից, այն զինտեխնիկան, որը կարող էր գործնական մեծ կիրառություն ունենալ, չի գնվել, փոխարենը ձեռք է բերվել կիրառման ոչ ենթակա տեխնիկա՝ ստեղծելով համալրվածության և անհրաժեշտ սպառազինության առկայության պատրանք:

**1.14** Ի հավելումն վերը նկարագրվածի՝ Նիկոլ Փաշինյանը շարունակում է գործողություններ կատարել Հայաստանի Հանրապետությունում առկա վիճակը առավել լարված դարձնելու ուղղությամբ: Այսպես՝ **2020թ. նոյեմբերի 16-ին** Նիկոլ Փաշինյանը գրառում է կատարել՝ ուղղորդելով զինված խմբերին բռնությամբ զուգորդված գործողություններ կատարել դատավորների նկատմամբ.

«Առաջնագծի զինվորների տասնյակ տեսանյութեր դիտեցի այսօր: Ապշած եմ տղաների խորագիտությունից:

Տղերք՝ դուք ճիշտ եք: Սպասում եմ ձեզ Երևանում: Վերջնականորեն լուծելու պատերի տակ վնասացողների հարցերը:

Հպարտ եմ ձեզանով:»<sup>18</sup>

<sup>15</sup> Նշումն արված է մեր կողմից:

<sup>16</sup> Նշումն արված է մեր կողմից:

<sup>17</sup> Մամլո ասուլիսի հղումը <https://www.youtube.com/watch?v=cwn3u-a-gYs>

<sup>18</sup> Գրառման հղումը՝ <https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2813963898923987>



**1.15** Ֆեյսբուք սոցիալական կայքում **2020թ. դեկտեմբերի 21-ին** կատարված գրառմամբ Նիկոլ Փաշինյանը նշել է՝

*«Մրանք Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի հավելվածներում Սյունիքի մարզի Շուռնուխ եւ Որոտան գյուղերի սահմանագծերի նկարագրություններն են:*

*Հավելվածները օրենքի անբաժանելի մասն են: Այս օրենքը ընդունվել է 2010 թվականին:*

*Դրանով սահմանվել է, որ Շուռնուխից ու Որոտանից արեւելք ընկած սահմանագծերը Հայաստանի եւ Ադրբեջանի պետական սահմանն է: Օրենքի ընդունման պահին այդ տարածքները եղել են ԼՂՀ հսկողության տակ:*

*Այսօր մեր սահմանապահները տեղակայված են նկարագրված սահմաններով:*

*2010 թվականին օրենքին կողմ են քվեարկել ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ խմբակցությունները: Այսօր ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն մեզ մեղադրում են իրենց ընդունած օրենքով գծանշված սահմանը որպես սահման ընդունելու մեջ:<sup>19</sup>»:*

Ընդ որում, ադրբեջանական գործերի՝ Հայտարարությամբ չնախատեսված առաջիադացմանը խոչընդոտել է ոչ թե Հայաստանի Հանրապետության կանոնավոր բանակը, այլ տեղում ձևավորված կամավորական ջոկատները, որոնք մեծապես կազմվել են տեղի բնակիչների կողմից:

Այսպիսով՝ Սյունիքի մարզում տեղի ունեցող իրադարձությունները դուրս են ինչպես Հայտարարության, այնպես էլ միջազգային հանրային իրավունքի կարգավորումներից և տրամաբանությունից, դրանք կատարվում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունն էլ ավելի վտանգելու, դրանց գոյությունը բացառելու դիտավորությամբ:

Նիկոլ Փաշինյանն իր պաշտոնավարման ընթացքում կատարել է գրեթե բոլոր հնարավոր գործողությունները՝ ուղղված բանակի կազմալուծմանը, սպայական անձնակազմի վարկաբեկմանը, մարտունակության նվազեցմանը և պատերազմի հրահրմանը: Այժմ ստեղծված իրավիճակում վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը շարունակում է իր քաղաքականությունը՝ ուղղված հասարակության բևեռացմանը, թշնամանքի ձևավորմանը:

## **II. Հանցագործության մասին հաղորդման իրավական հիմքերը և հիմնավորումները**

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի.

*«1. Պետական դավաճանությունը՝ թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը կամ օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելը կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության՝*

<sup>19</sup> <https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2848403365480040>

*պատժվում է ազատագրվմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:*

*(...»*

Սույն հանցակազմի անմիջական օբյեկտ է հանդիսանում պետության արտաքին անվտանգությունը, որի բաղկացուցիչ մասն են կազմում պետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականության պաշտպանվածությունը:

Պետական դավաճանության օբյեկտիվ կողմը, ի թիվս այլ գործողությունների, կազմում է նաև թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա պետությանն այլ օգնություն ցույց տալը: Որպես այլ օգնություն կարող է բնութագրվել ցանկացած այնպիսի գործողությունը, որն այլ պետության համար ստեղծում է ՀՀ արտաքին անվտանգության դեմ ոտնձգելու նպատակով պայմաններ:

Պետական դավաճանության այս տեսակը համարվում է ավարտված՝ օգնությունը փաստացի ցույց տալու պահից, անկախ որևէ հետևանք վրա հասնելու հանգամանքից: Ընդ որում, պետական դավաճանություն կարելի է կատարել ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ պատերազմական պայմաններում:

***Այսպիսով, վերը նկարագրված փաստական տվյալներն առերևույթ հիմնավոր կասկածներ են առաջացրել, որ տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվել է մասնավորապես հետևյալ արարքներով՝***

- 1) Նիկոլ Փաշինյանն իր գործողություններով (խոսքով) փակուղի է մտցրել Ադրբեյջանի հետ բանակցությունները.
- 2) Նիկոլ Փաշինյանի անմիջական հրահանգների արդյունքում ձեռք է բերվել այնպիսի զինտեխնիկա, որը սպասվելիք պատերազմում կիրառվել և բարձր օգտակար գործողության գործակից ունենալ չէր կարող.
- 3) Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունը 2020թ. սեպտեմբերի 27-ին ռազմական դրություն հայտարարելու մասին որոշում է կայացրել, որով ի թիվս այլ սահմանափակումների, սահմանափակվել է հրապարակային խոսքը ռազմական գործողությունների վերաբերյալ: Այս սահմանափակումները նպաստել են հասարակության մոլորեցմանը, այդ թվում՝ իրական զոհերի և ռազմագերիների մասին տեղեկություններ չստանալուն.
- 4) Չորահավաքը կազմակերպվել է թերի (բազմաթիվ անձինք լինելով ծանուցված, այդպես էլ մասնակից չեն դարձվել ԱՀ սահմանների պաշտպանությանը), ինչպես նաև պատերազմի օրերին անմիջականորեն Նիկոլ Փաշինյանի հրամանով դադարեցվել է լրահամալրումը.
- 5) Նիկոլ Փաշինյանը հրապարակային աղբյուրներով տեղեկատվություն է տրամադրել Հայաստանի Հանրապետության պաշարների և պահուստների, պահեստազորի մեկ տարվա զորացրվածների քանակի, ինչպես նաև ծրագրավորվող ռազմական գործողությունների մասին:
- 6) Դեռևս 2020թ. հոկտեմբերի 19-20-ը ունենալով շատ ավելի քիչ կորուստներով պատերազմը կանգնեցնելու հնարավորություն՝ Նիկոլ Փաշինյանը չի դադարեցրել պատերազմը (ռազմական բախումը),



ինչպես նաև 09.11.2020թ. ստորագրել է Հայտարարությունը, որով ուղղակի վտանգի տակ է դրել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետականությունը և տարածքային ամբողջականությունը.

- 7) Նիկոլ Փաշինյանն իր քաղաքականությամբ չի ապահովում Սյունիքի մարզի, այդ թվում՝ Դավիթ Բեկ, Կաղնուտ, Ուժանիս, Եղվարդ, Ագարակ, Դիցմայրի, Սյունիք, Գեղանուշ, Ճակատեն, Շիկահող, Ներքին Հանդ, Ծավ գյուղերի և Կապան քաղաքի սահմանների պաշտպանությունը և անվտանգությունը, զիջելով Սյունիքի մարզի հարակից տարածքները (Ղուբաթլու) Ադրբեջանին, այն դեպքում, երբ
- ա) ՀՀ վարչապետի, ՌԴ նախագահի և ԱՀ նախագահի միջև 09.11.2020թ. ստորագրված նվաստացուցիչ փաստաթղթում Ղուբաթլուի (Քաշաթաղի) կամ դրա որևէ մասի հանձնման մասին խոսք չկա.
  - բ) Ադրբեջանի և Հայաստանի փոխհարաբերություններում առկա է սեփական քաղաքացիներին և սահմանամերձ բնակավայրերը պաշտպանելու անհրաժեշտություն.
  - գ) Ամբողջությամբ լուծված չեն ռազմագերիներին փոխանակելու և մահացածներին փոխանցելու հարցերը.
  - դ) Առկա է պետական սահմանների ճշգրտման անհրաժեշտություն:

Այսպիսով՝ վերը նկարագրված բոլոր գործողությունները բովանդակել են օգնություն՝ տրամադրված Ադրբեջանի Հանրապետությանը ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական պայմաններում: **Նշված արարքների արդյունքում անմիջականորեն պատերազմական գործողությունների ժամանակ Ադրբեջանը ստացել է հսկայական առավելություն:** Ի վերջո՝ անգամ ռազմական գործողությունների ավարտից հետո Նիկոլ Փաշինյանը ոչ միայն թշնամուն է հանձնում հայտարարությամբ չնախատեսված տարածքներ, այլև շարունակում է պառակտել հասարակությունը՝ նպաստել դրա բևեռացմանը: Իբրև նշվածի ապացույց, բավական է վկայակոչել 19 դեկտեմբերի 2020 թվականին դեպի Եռաբլուր պանթեոն կազմակերպված երթը, այն պայմաններում, երբ վարչապետի համար ակնհայտ էր, որ գոհված զինձառայողների հարազատները, ինչպես նաև շատ ազատամարտիկներ փորձելու են խոչընդոտել իր մուտքը պանթեոն, ինչն էլ հղի էր քաղաքացիների միջև բախումներով:

***Պետական դավաճանության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը ոչ միայն գիտակցում է իր գործողությունների հանրային վտանգավոր բնույթը, այլև ցանկանում է դրանք կատարել:***

Վերը նկարագրված փաստական տվյալներն առերևույթ հիմնավոր կասկածներ են առաջացրել, որ Նիկոլ Փաշինյանը տեղեկացած լինելով ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման անհրաժեշտության մասին, շարունակել է պատերազմական գործողությունները, որի արդյունքում գոհերի թիվը հասել է շուրջ հինգ հազարի, ունեցել ենք տարածքային ահռելի կորուստներ: Պատերազմական գործողությունները ժամ առաջ դադարեցնելու անհրաժեշտության

մասին վարչապետին տեղեկացրել են ինչպես Արցախի նախագահը, այնպես էլ ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Օնիկ Գասպարյանը:

Նշվածը վկայում է այն մասին, որ պատերազմը դադարեցնելու օբյեկտիվ հնարավորություն ունենալով հանդերձ, տեղեկացված լինելով այդ հնարավորությունից չօգտվելու բոլոր ռիսկերի մասին, վարչապետ Նիկոլ Փաշինյանն այնուամենայնիվ որոշում է կայացրել՝ չընդունել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի առաջարկը, ինչն առավել քան խոսում է բացառապես ուղղակի դիտավորության մասին:

Մինչ օրս որևէ ողջամիտ փաստարկ, պատճառաբանություն, բացատրություն չի ներկայացվել այն առնչությամբ, թե ինչու պատերազմական գործողությունները չեն դադարեցվել հոկտեմբեր ամսվա առաջին տասնօրյակում:

Միաժամանակ, ողջամիտ պատասխան Նիկոլ Փաշինյանի կողմից չի տրվել նաև այն հարցին, թե ինչու են կատարվում այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն Հայտարարությամբ (անմիջականորեն Հայաստանի Հանրապետության սահմաններին հարակից տարածքների հանձնում): Հարկ է առանձնակի շեշտադրել, որ այս գործողություններից որևէ մեկը չի կարող բարենպաստ լինել Հայաստանի Հանրապետության համար:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ զինված ուժերի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների դեմ հարուցված քրեական հետապնդումներից որևէ մեկը դեռ չի ավարտվել օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով:

Գտնում ենք, որ քննության առարկա պետք է դառնան նաև 24.09.2020 թվականին ադրբեջանական կայքում հրապարակված՝ Նիկոլ Փաշինյանի և նրա ներկայացուցչի կողմից Ադրբեջանի պաշտոնատար անձանց հետ գաղտնի հանդիպումների մասին տեղեկությունները:

### **Հանցագործության սուբյեկտ է հանդիսանում 16 տարին լրացած ՀՀ մեղսունակ քաղաքացին:**

Նկարագրված արարքներն իրենց հերթին կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքի **179-րդ** (Յուրացնելը կամ վատնելը), **300.2-րդ** (Տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունները) կամ **304-րդ** (Վնասարարությունը) հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

Քննարկվող դեպքում առկա են քրեական գործ հարուցելու և հիմքը և առիթը: Հանցագործության մասին հաղորդումը չունի վերացական բնույթ, ներկայացված փաստական հանգամանքները իրենց բնույթով բավարար են հանցագործության հատկանիշների առնվազն արտաքին հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար:

### **III. Պահանջը**

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182 հոդվածով՝

խնդրում ենք՝

- **հարուցել քրեական գործ վերը ներկայացված փաստերի առթիվ:**

Տեղեկացված ենք հանցագործության մասին սուտ մատնության վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

*Ծանուցման հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Զաքյան 7-2*

Հաղորդում ներկայացնողներ՝